նը, որի լիազօր ներկայացուցիչ Ռոստոմ Զօրեանը Թիֆլիսից մեկնել էր Սթոկհոլմ՝ նախօրօք բաժին ունենալով Պետրոգրադի խորհուրդների և ընկերվարական շրջանների նախապատրաստական աշխատանքներում։ Պետրոգրադի Բանւ. և Զինւ. Խորհուրդը իր պատուիրակութեան համար մշակած հրահանգներում դրել էր և Թիւրքահայաստանի ինքնավարութեան պահանջը։

Հ. Ց. Դաշնակցութիւնը կազմակերպիչ մարմնին ներկայացրեց մի ընդարձակ յուշագիր, որի մէջ մանրամասնօրէն նկարագրում էր հայերի վիճակը պատերազմի նախօրեակին ու պատերազմի ընթացքին, հայկական տեղահանութիւններն ու կոտորածները, և ձեւակերպում հայկական պահանջները — «Ռուսահայաստանը Վրաստանի և Թաթարստանի (Անդրկովկասի) հետ պէտք է լինի ինքնավար՝ դաշնակցական ու հանրապետական Ռուսաստանի ծոցում»։ Թիւրքահայաստանը պէտք է ազատագրուի Թիւրքական տիրապետութիւնից։ «Ազատ Հայաստանը բովանդակելու է հայկական 6 վիլայէթները և Կիլիկիան։ Ի բաց առեալ 1877–78 թուականների պատերազմից յետոյ հայկական նահանգներին միացուած մահմետական շրջանները»։ «Հայաստանի չէզոքութիւնը պէտք է երաշխաւորուի միջազգայնօրէն», «Թիւրքական կառավարութիւնը պէտք է հատուցանի հայերի վնասներն» և այլն։

Ինչպէս յայտնի է, Սթոկհոլմի խորհրդաժողովը դաշնակից պետութիւնների բացասական վերաբերումի և Ռուսաստանի ներքին դէպքերի զարգացման հետեւանքով չդումարուեց։ Հետաքրքրական է, որ իթթիհատական Թիւրքիան էլ ներկայացուցիչներ էր ուղարկել Սթոկհոլմ՝ Ն. Մասլիա էֆ. և դր. Հիւսէյին Զադէ Ալի բէյ, որոնք իրենց յուշագրի մէջ, առանց որև է ակնարկ անելու հայկական խնդրի մասին, «յանուն Թիւրք դեմոկրատիայի», պահանջում էին «ազգերի ինքնորոշման իրաւունք՝ առանց խորութեան սպիտակ, դեղին ու սև ցեղերի միջև», «զաղտնի դիւանագիտութեան վերացում» և այլն*)։

Հոկտեմբերեան յեղաշրջումից յետոյ խաղաղութեան գործը ստացաւ նոր ընթացք։ բոլշևիկները դիմեցին անջատ հաշտութեան՝ յայտարարելով «եղբայրացման» սկզբունքը ռազմաճակատի հակառակորդ զինուորների հետ և պատերազմող կողմերին առաջարկելով անցնել անմիջական բանակցութիւնների։ Այս քաղաքականութեան, ինչպէս և երկրի ներսը բռնկուած անիշխանութեան ու քաղաքացիական կատաղի կռիւների հետեւանքով՝ սկսուեց համատարած քայքայում ռազմաճակատում։ զօրամասերը թողնում էին դիրքերը և հրացանը առած՝ շտապում դէպի տուն, որպէսզի օր առաջ բաժին ստանան բոլշևիկների խոստացած «հողից ու բուրժուաների գոյքից»։ Եւ Բալթիկ ծովից մինչև Քիրմանշահ, ամբողջ տարածութեան վրա, միլիոնաւոր զինուած մարդիկ՝ խուժեցին դէպի թիկունք։

---

*) Սթոկհոլմի խորհրդաժողովին վերաբերող ամբողջ նիւթը հրատարակուած է առանձին հատորով։ «Stockholm», **Ed. Tidens Förlag, Stockholm**, 1918, որի մէջ ամբողջովին զետեղուած է և Հ. Ց. Դաշնակցութեան յուշագիրը։